ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 12-Ն

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը ավագանուն ներկայացրեց, որ ՀՀ կառավարության կողմից հատկացվել է 883,2 հազար դրամի դրամաշնորհ նվազագույն աշխատավարձի, էլեկտրաէներգիայի և գազի սակագների բարձրացման, ինչպես նաև 1974թվականից հետո ծնված նվազագույն աշխատավարձ ստացողների նպատակային սոցիալական վճարների հետ կապված 2016թվականին առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման համար, ուստի առաջարկում եմ բյուջեում կատարել փոփոխություն:

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին

Որոշեց՝

Հաստատել 2016թվականի բյուջեի փոփոխությունը

1.Բյուջեի եկամտային մասը ավելացնել 883,2 հազար դրամով:

2.Բյուջեի ծախսային մասի 01-01-01-03 հատվածում համապատասխանաբար՝ 4212 հոդվածին 50,0հազար դրամ,իսկ մնացածը՝ 833,2 հազար դրամը 4111հոդվածին

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ
4. ՌԵՎԱԶՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 13-Ն

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարը ավագանու անդամներին տեղեկացրեց,որ ներկա պահին խիստ անհրաժեշտություն է առաջացել վերացնել գյուղի խմելու ջրագծի ներքին ցանցի, 8կմ հեռավորությունից գյուղ հասնող խմելու ջրատարի վթարները ինչպես նաև մաքրել ջրավազանները սելավաջրերից առաջացած տիղմից:Համայնքապետը միաժամանակ հրատապ համարեց համայնքի վարչական տարածքում կառուցելու երկրորդ գիծ պաշտպանական խրամատ:

Համայնքապետ՝ Ն.Աթաբեկյանը առաջարկեց վերը նշված ծավալուն աշխատանքները կատարելու համար համախմբել բնակիչների ուժերը՝ ֆիզիկական աշխատանքի տեսքով, իսկ օգտագործվող մեխանիզմների (էքսկավատոր,եռակցող սարք, տեղափոխող տրակտոր) համար անհրաժեշտ դիզ.վառելիքը՝550լիտր ձեռք բերել գյուղապետարանի միջոցներով, որի համար բյուջեում պետք է կատարել համապատասխան փոփոխություն:Ավագանու անդամները ընդունեցին համայնքի ղեկավարի առաջարկները:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով, համայնքի ավագանին

Որոշեց՝

Հաստատել 2016թվականի բյուջեի փոփոխությունը

1.Համայնքի բյուջեի 11-01-02-51 հատվածի պահուստային ֆոնդի 4891 հոդվածից 200,0հազար դրամ պակասեցնել և ավելացնել նույն հատվածի 4264 հոդվածին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԳԱՍՊԱՐՅԱՆ ԳԱԳԻԿ
3. ՄԽԻԹԱՐՅԱՆ ՌԱԴԻԿ
4. ՌԵՎԱԶՅԱՆ ՄՀԵՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**